ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
հիմնադրամի կարիքների համար տպիչ սարքերի ձեռքբերման գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողի «ՀՊՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան, Տիգրան Մեծի 17 **09 սեպտեմբերի 2022թ.**
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ **Մ. Հարությունյան**
Հանձնաժողովի անդամներ՝ **Դ. Սարգսյան,**
Գ. Վարդանյան /բացակա/
Հանձնաժողովի քարտուղար՝ **Ս. Ավետիսյան**

1. Տեղեկատվություն նիստի վերսկսման մասին

Նիստը վերսկսվեց 09.09.2022թ. ժամը 10:00-ին:
Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ Հրանտ Համբարձումյան Ա/Ձ-ն սահմանված ժամկետում էլ.աճուրդ համակարգի միջոցով կցել է առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի շտկված տարբերակը:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտի վերաբերյալ

09.09.2022թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Հրանտ Համբարձումյան Ա/Ձ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:
2.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:
2.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Հարությունյան

անդամներ՝ _____ Դ. Սարգսյան

_____բացակա_____ Գ. Վարդանյան

Քարտուղար՝ _____ Ս. Ավետիսյան